բաժանեն Մանազկերտն Խամուրից [1] և Գարաքիլիսայից, Ալաշկերտն Իւչքիլիսայից, Վան Դիատինից:

ՆՇԱՆԱՒՈՐ ԼԵՌՆՔ

Որչափ որ երկու դաշտագետիններու շուրջն շըղթայք լեռնանման խոյացած են դաշտի վերան, սակայն տեղ տեղ կը տեսնուին շղթայի ծայրի վեր բարձրացած գագաթներ մեծ ու փոքր սարեր, որք անուն ունին և սար կասուին, տեղ տեղ նաև շղթայն քիչ կամ շատ խոնարհած է ուստի մարդոց երթևեկութիւնը կը լինի, սա ևս կէտուկ (կիրճ) անուն կը կրէ:

Ծաղկանց լեռներն, որք Ալաշկերտի դաշտի արևելեան հարաւ կընկնին, նաև Մուրատի սկսած վայրէն ցխառնուրդ Շեռեանայ եղած ընթացքին հարաւ կամ ձախ ափն ի վեր բարձրացած են:

Նպատ.—Ծաղկանց լեռներու ի հիւսիս խոնարհած թևի և Մուրատի ձախ ափի վերայ ընդհատած վայրն բարձրացած է մի փոքր լեռ—Նպատ, սորա հիւսիսային ստորոտն գոգ մի կազմուած է. ուր կառուցուած է այն մեծ և պատմական վանքն, որ Ս. Լուսաւորիչ շի-

---

1. Խամուր մօտ 100 գիւղ քուրդ ժողովուրդ ունի, գարուս սկիզբներն ամբողջովին հայ էին, այսօր բոլորովին քուրդ բնակիչներ հաստատուած են. Մուրատ ի հիւսիսոյ, Արածանի յարեւմտից պատած են զԽամուր, Նաև արեւելեան և հարաւային կողմէ պատած են Ծաղկանց լեռներու շղթայն, որով այս վայրը Ծաղկանց լեռներու արեւմտեան հիւսիսային երեսի ստորոտն կընկնի, նշանաւոր հնութիւնք և շինութիւնք այս տեղ կգտնուին, որով կարող ենք ասել թէ Ծաղկոտն գաւառն է: